



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հուլիսի 2017 թվականի թիվ 140 - Ա

ՌՈՒԶԱՆ ԱՐՏԵՄԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ Կ. ՄԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10 - ԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով «ՀՀ Տավուշի մարզի Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2017թ. հուլիսի 7-ի թիվ 55 արձանագրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Ռ. Թումանյանի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Ռուզան Արտեմի Թումանյանին 2017 թվականի հուլիսի 11-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքել աշխատանքային պայմանագիր և լուծել Ռ. Թումանյանի հետ 2017թ. մայիսի 10-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱՐՈՎՅԱՆ



2017թ. հուլիսի 11
ք. Իջևան